

ԱՉԴԱՐԱՐ

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՐԱՆԻ ՀԱՅՈՑ ՔՈՒԷՅԹԻ ԵՒ ԱՐԿԵԱԿԱՆ ԾՈՑԻ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ԹԵՄԻՆ
P.O.Box: 8157, Salmiyeh 22052- Kuwait. Tel: 965-25614392, Fax: 965-25638312, e-mail: q8church@yahoo.com

ՆՈՐ ՇՐՋԱՆ, Բ. Տարի, Թիւ 67, Ուրբաթ, 7 Հոկտեմբեր, 2010

Լուրեր Զուէթ Ազգային Վարժարանէ

Քուէթի Ազգային Վարժարանի Շրջանաւարտից Միութեան հիմանդիր ժողով

Եղբայրական ձեռքստեղծումներ, կարօտագին համբոյրներ, ջերմ գրկախառնութիւն եւ... մի քանի տարուայ, Նոյնիսկ տասնամեակի մը բացակայութիւնը արդէն չբացած է: Այս Եր Զուէթի Ազգային Վարժարանի Շրջանաւարտից միութեան անդրանիկ ժողովին ներկայացած նախկին աշակերտներու, իսկ այժմ՝ շրջանաւարտներու



տրամադրութիւնը: Եկար բացակայութիւնն ու կեանքի ամենատարբեր հանգամանքները պատճառ չէին դարձած, որ կորչէր աշակերտական համեստութիւնն ու հարազատ մտերմութիւնը: Չգացմունքներու այս յորձանուտին տակ վերադարձած էին «լաւագոյն տղերքն» ու բոլոր սիրելիները:

Այստեղ առաջին անգամ յայտնուած մարդն ալ ականայ կը միախառնուէր այդ հարազատ հոսանքին: Հետաքրքրական էր Զուէթի հոգեւոր հովիւ արժաւապատիւ Տ.Արտակ քինյ.ի դիպուկ ակնարկը, թե՛ «Եթէ ձգենք, ասոնք մինչեւ առտու ալ կը խօսին»:



Իսկապէս, երբ կը խօսինք աշակերտական տարիներու մասին, ականայ կը դառնանք աշակերտ ու մեզի համար ամեն հոգ կը չքանայ, կը մնայ միայն իրար հետ գրուցելու ու անընդհատ խօսելու բուռն ցանկութիւնը:

Ազգային Վարժարանի Շրջանաւարտից Միութեան անդրանիկ ժողովը բացուած յայտարարեց վարժարանի տնօրէն պրն. Մանուկ Մանուկեանը, որ

Նաեւ վարեց ժողովի հետագայ ընթացքը: Ան իր խօսքին մէջ շեշտեց շրջանաւարտից միութիւն ունենալու կարելիութիւնը, գովեց նաեւ այն յանձնախումբի աշխատանքը, որ ստանձնած էր շրջանաւարտներուն հաւաքելու պարտականութիւնը: Թերեւս շրջանաւարտներու ստուար ներկայութիւնը յիշատակուած խօսքի իրեղէն ապացոյցն էր:

Շրջանաւարտներու անսահման ոգեւորութենէն կարելի է պատկերացնել ստեղծուած միութեան ապագայ աշխատանքի որակը: Առհասարակ միութեան կամ կազմակերպութեան մը յաջող ընթացքը կ'ապահովէ հետեւեալ հինգ գործօնի առկայութիւնը՝ գիտակցութիւն, ցանկութիւն, աշխատասիրութիւն, լրջութիւն եւ մասնագիտական մօտեցում:

Առաջին չորս գործօնի առկայութիւնը ոչ ոք կրնար չտեսնել, իսկ ահա վերջինի ապահովման համար էր թերեւս, որ վարժարանի տնօրինութիւնն ու հոգաբարձութեան խորհուրդը որոշեց Շրջանաւարտից Միութեան վարչութեան կազմի մեծ մասը անձամբ նշանակել:

Միութեան անդրանիկ ժողովին իրենց ներկայութիւնը բերած էին նաեւ ազգային մարմիններու ներկայացուցիչներ, որոնցմէ թեմական խորհուրդի անդամ պրն. Յարութիւն Պետիրեանն ու վարժարանի հոգաբարձութեան ատենապետ պրն. Սունիր Դարբինեան հանդէս եկան սրտի խօսքով: Անոնք նախ յաջողութիւն մաղթեցին Նորաստեղծ միութեանն ու նշեցին անոր կարելիութիւնը՝ դպրոցի հետագայ գործունեութիւններուն:



Բուն հանդիպման բուն քուէարկութեան արդիւնքով Ազգային Վարժարանի Շրջանաւարտից Միութեան վարչութեան անդամ ընտրուեցան՝

Տիկ.Կիլտա Իյճեան

Պրն. Թովմաս Վարդանեան

Պրն. Յակոբ Սովսեւեան

Թող Աստուած երկար կեանք տայ այս միութեան, յաջողութիւն ու անսպառ կորով՝ իր անդամներուն, որպէսզի կարենան ճիշդ կազմակերպել իրենց աշխատանքն ու նպաստեն վարժարանի ու գաղութի ծաղկման:

Ծորճ Արապաթեան

Հաղորդագրուիւն

Ուրախութեամբ կը յայտնենք, որ Ուրբաթ, 1 Հոկտեմբեր 2010-ին, կայացաւ Քուէյթի Ազգային Վարժարանի Շրջանաւարտից Միութեան անդրանիկ ու հիմնադիր ժողովը՝ Թեմական Խորհուրդի, Ազգային Վարչութեան, Ազգային Վարժարանի հոգաբարձութեան անդամներուն, տնօրէնութեան եւ հայրենաւանդ ուսուցիչներու եւ մեծ թիւով շրջանաւարտներու ներկայութեամբ:

Քուէյթի Ազգային Վարժարանի տնօրէն՝ Պրն. Մանուկ Մանուկեանը բարի գալուստի իր խօսքին մէջ անդրադարձաւ սոյն միութեան հիմնադրման անհրաժեշտութեան մասին, առաւել հակիրճ ձեւով ներկայացուց անոր վստահուած աշխատանքային ծրագիրը:

Ետք յաջորդաբար խօսք առին Տէր Արտակ Քիւյ. Քեհեաեան, Թեմական Խորհուրդի անդամ Պրն. Յարութ Պետիրեան եւ հոգաբարձութեան ատենապետ՝ Պրն. Սունիր Դարբինեանը:

Խօսքերու աւարտին ժողովը ընտրեց Շրջանաւարտից Միութեան վարչութիւնը:

Միութիւնը իր վրայ պարտք պիտի վերցնէ աշխուժ գործունեութեամբ նպաստել վարժարանի ներքին կեանքին, ինչպէս նաեւ համախմբելու վարժարանի հին ու նոր, հեռու եւ մօտիկ շրջանաւարտներուն:

*Ի դիմաց՝
Հիմնադիր ժողովի Դիւան*

Լուրեր Անթիլիասի Կաթողիկոսարանէն

ԵՐԿԻՐՈՍՈՒԹԻՒՆԸ ՈՒ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ
ՄԻՈՒԹԵԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ՄԻԱԿ ՃԱՄԲԱՆ Է՝

*Յայտարարեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս
Պարսելոնայի մէջ*

Եկեղեցւոյ Միութեան
Հրամայական Արնհրաժեշտութիւնը
Այսօր՝ նիւթին մասին խօսելով,
Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս
Մեծի Տանն Կիլիկիոյ
կարեւորութեամբ ընդգծեց
միութեան առաջնահերթութիւնը՝
որպէս աղբիւր եկեղեցւոյ ներքին
հզօրութեան ու անոր
առաքելութեան ազդու
կենսագործման՝ ներկայ աշխարհի
տագնապներուն ու
մարտահարւերներուն դիմաց:



Վեհափառ Հայրապետը հրաւիրուած էր Պարսելոնայի (Սպանիա) մէջ տեղի ունեցող Մենթ Էճիտիոյի միջազգային համագումարին խօսելու՝ եկեղեցւոյ միութեան յատկացուած նիւստին: Վեհափառ Հայրապետը իր խօսքը սկսաւ ակնարկելով Էքիւմէնիք շարժումի ներկայ կացութեան: Ան ըսաւ, թէ կարելի չէ խօսիլ եկեղեցւոյ միութեան մասին առանց խօսելու Էքիւմէնիք շարժումի մասին, որովհետեւ, Էքիւմէնիք շարժումը ո՛չ միայն շրջագիծն է միութեան ուղղութեամբ տարուող աշխատանքներուն, այլ անոր գոյութեան պատճառն է: Այսօր, Էքիւմէնիք շարժումը լուրջ տագնապի մատնուած է, համաձայն Վեհափառ Հայրապետին, շարք մը պատճառներով: Այդ պատճառներու կարգին կ'արժէ յիշել համաշխարհայնացումը, տնտեսական դժուարութիւնները, միջ-կրօնական երկխօսութեան առաջնահերթութիւնը եւ եկեղեցիներու անտարբերութիւնը: Հետեւաբար, այսօր նաեւ եկեղեցւոյ միութեան խնդիրը դարձած է ոչ այնքան հրատապ եկեղեցիներու համար:

Այս ընդհանուր մուտքէն յետոյ Վեհափառ Հայրապետը յիշեցուց, թէ անցնող 50 տարիներուն, միութեան գծով հսկայ աշխատանք տարուած է թէ՛ եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին, թէ՛ Վատիկանի եւ թէ՛ շրջանային

եկեղեցական խորհուրդներու կողմէ: Կատարուած աշխատանքը Վեհափառը բաժնեց երեք մասերու:

Առաջին բաժնին մէջ Վեհափառը անդրադարձաւ այն աշխատանքներուն, որոնց հիմնական նպատակը եկեղեցւոյ միութեան հասկացողութեան յստակացումն էր, ինչպէս նաեւ միութեան նոր տարագներու փնտռտուքը: Երկրորդ բաժնին մէջ Վեհափառը անդրադարձաւ աստուածաբանական երկխօսութիւններուն, որոնք լուսարձակի տակ բերին եկեղեցիները իրարմէ բաժնող խնդիրները, օրինակ՝ Քրիստոսի բնութեանց հարցը, Պապին գերագահութիւնը, տիեզերական ժողովները եւ յՈրդւոյ բխումը, եւայլն: Երրորդ բաժնին մէջ Վեհափառը խօսեցաւ եկեղեցիներու միջեւ յառաջացած գործակցութեան մասին՝ պարզելով գործակցութեան շարք մը բնագաւառներ, որոնք իրագործուեցան եկեղեցական խորհուրդներու ճամբով:

Որպէս եզրակացութիւն, Վեհափառ Հայրապետը շեշտեց, թէ երկար դարեր իրարմէ հեռացած, նոյնիսկ իրարու հակադրուած, եկեղեցիներ աստուածաբանական երկխօսութեան ու միջ-եկեղեցական գործակցութեան ճամբով իրարու մօտեցան եւ սկսան միասին մտածել, միասին ծրագրել ու գործել՝ բնականաբար կարելիութեան սահմաններէն ներս: Եկեղեցիներու Համաշխահային Խորհուրդը, Վատիկանը, յատկապէս Վատիկանի երկրորդ ժողովէն յետոյ, նշանակալից դեր ունեցան այս գծով:



Ապա Վեհափառ Հայրապետը իր դասախօսութեան երրորդ բաժինը սկսաւ հարց տալով.- այս բոլորէն յետոյ ի՞նչ. արդեօ՞ք եկեղեցիները մօտեցած են միութեան թէ միութիւնը տակաւին կը մնայ հեռաւոր, վախճանական նպատակ. ի՞նչ պէտք է կատարեն եկեղեցիները այսօր: Այս հարցադրումներէն յետոյ Վեհափառ Հայրապետը ըսաւ, թէ եկեղեցիները պէտք է պատասխանեն առաջին հարցումին եւ թէ ինք յստակ առաջարկներ ունի վերջին հարցումի գծով.-

ա.- Եկեղեցիներ պէտք է վերանորոգ աշխուժութեամբ շարունակեն աստուածաբանական երկխօսութիւնը թէ՛ միջազգային եւ թէ՛ շրջանային մակարդակներու վրայ:

բ.- Անհրաժեշտ է յստակացնել՝ ճանաչում, ընդունելութիւն, եզրակացութիւն, համաձայնութիւն՝ աստուածաբանական բառերու իմաստը, որովհետեւ եկեղեցիներ տարբեր հայեցակէտերով կը դիտեն այս բառերու իմաստը ու տարողութիւնը:

գ.- Միջ-եկեղեցական գործակցությունը պետք է անելի խորացնել եւ ընդլայնել՝ յատուկ գործընթացներ յառաջացնելով յատկապէս տեղական մակարդակի վրայ:

դ.- Դաւանաբանական ու աստուածաբանական խնդիրներու առընթեր, անհրաժեշտ է որ եկեղեցիներ միասնաբար քննեն ներկայ ընկերությունը յուզող բարոյական ու ընկերային հարցեր, որոնք սկսած են նոր բաժանումներ յառաջացնել եկեղեցւոյ կեանքէն ներս:

ե.- Եկեղեցիներ պետք է որոնեն այնպիսի միջոցներ, որով կարելի դառնայ աստուածաբանական մարզէն անդին առօրեայ կեանքին մէջ եկեղեցւոյ միությունը արտայայտել: Այս ծիրէն ներս, Վեհափառ Հայրապետը որպէս օրինակ յիշեց Սուրբ Զատիկը աշխարհի բոլոր քրիստոնէաները նոյն օրը տօներու հրամայականը:

զ.- Ներկայ աշխարհը լուրջ տագնապներու դիմաց է. օրինակ մարդկային իրաւանց բռնաբարում, ցեղասպանություն, ահաբեկչություն, բարոյական արժէքներու անկում, տագնապներ, որոնց նկատմամբ եկեղեցիներ չեն կրնար տարբեր ըլլալ ու անտարբեր մնալ ըսաւ Արամ Ա. Կաթողիկոս:

Յայտնենք, որ Մենք ԷՃԻտիոյի համագումարին մասնակցեցան անելի քան 500 հոգիներ, որոնց շարքին՝ նախագահներ, նախարարներ, համալսարանի դասախօսներ եւ աշխարհի բոլոր կրօնները ներկայացնող բարձրաստիճան պատասխանատուներ:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԿՆԵՑԱԻ ՍՊԱՆԻԱ

Ընդառաջելով Վատիկանի Մենք ԷՃԻտիօ՝ միջազգային կազմակերպութեան հրաւերին, Արամ Ա. Կաթողիկոս մեկնեցաւ Սպանիա մասնակցելու յիշեալ կազմակերպութեան նախաձեռնութեամբ տեղի ունենալիք միջազգային համագումարին:

Համագումարը տեղի պիտի ունենայ Պարսելոնա քաղաքին մէջ, որուն պիտի մասնակցին վեց նախագահներ, վարչապետներ նախարարներ, կրօնական բարձրաստիճան ներկայացուցիչներ, տնտեսագէտներ ու ընկերութեան կեանքի զանազան բնագաւառներուն պատկանող պատասխանատուներ: Վեհափառ Հայրապետը խօսք պիտի առնէ եկեղեցիներու միութեան ու գործակցութեան նուիրում ճիստին:

Լուրեր Սփիռքեան Մամուլէն

ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՆԱՄԱՁ՝ ՀԱԿԱԿՇԻՌ ՔԱՅԼԵՐ

Անիի Մայր տաճարին մէջ իսլամական արարողութիւն կատարելը անշուշտ գրգռութիւն է, հոգեւոր արժեքներու ոտնակոխում, սրբապղծութիւն նոյնիսկ: Պահ մը մնանք կրօնական դիտարկումներու համապարունակին մէջ՝ ըսելու համար, որ թուրք ազգայնականներու կատարածը խորքին մէջ ուղղուած է ոչ միայն հայ քրիստոնեաներուն դէմ, այլ ընդհանրապէս քրիստոնեայ աշխարհին:

Անկախ այն իրողութենէն, որ հայկական կողմէն համարժեք բողոքի չարժանացաւ պատահածը, պէտք է հաստատել նաեւ քրիստոնեայ աշխարհին կրաւորականութիւնը երեւոյթին նկատմամբ: Համեմատական եզրերը կրնան երեւութապէս շատ մօտ չըլլալ, այսուհանդերձ կարելի չէ չիշել Զուրանը այրելու սպառնալիքով աշխարհը զբաղցուցած ամերիկացի կրօնական մէկ դէմքին առնելիք քայլին դիմաց բարձրացած աղմուկը նախ անշուշտ իսլամական աշխարհէն, յետոյ նաեւ քրիստոնեայ հասարակութիւններէն եւ կրօնական կեդրոններէն:

Հայկական կողմը մնալով կրօնական դիտարկումներու սահմաններուն մէջ կրնար քայլ առնել՝ շարժելու համար քրիստոնեայ աշխարհը ի տես այս սրբապղծութեան:

Յիշեցնելով, որ հայերը Երեւանի թէ Շուշիի մէջ մզկիթներ կը վերանորոգեն, հայկական կրօնական կեդրոնները թէ հասարակական կազմակերպութիւնները ընդգծելիք եւ պահանջելիք շատ կէտեր ունեն քրիստոնեայ աշխարհէն: Եւ ոչ միայն քրիստոնեաներէն, այլ նաեւ իսլամներէն, անոնց ալ յիշեցնելու համար այս բոլորին առընթեր հայկական կրօնական կեդրոններուն ընդվզումն ու դատապարտանքը Զուրան հրկիզելու սպառնալիքներուն դիմաց:

Միջինարեւելան իսլամ ազգաբնակչութիւններուն մօտ առաջադրելի քարոզչաքաղաքական գործողութիւն մը կրնար յանգեցնել իսլամ կարգ մը շրջանակներու առնուազն անհամաձայնութեան՝ Անիի Մայր տաճարին մէջ տեղի ունեցած նամագին ուղղութեամբ:

Թոյլ տպաւորութիւն ձգեց նաեւ Թուրքիոյ սահմանամերձ շրջանին հայկական ցոյց-աղօթք գործողութիւնը, որ յուզախառն զգացականութեան սահմաններէն անդին չանցաւ: Փաստօրէն, գէթ մինչ այժմ Անիի տաճարին մէջ կատարուածը չունեցաւ հայկական կողմէն համարժեք հակազդեցութիւն:

Փորձենք կատարել արձանագրուածին քաղաքական մեկնաբանութիւնը: Անիի մէջ եղած նամագի լրատուութեան կը զուգորդուի Աղթամարի եկեղեցւոյ գմբէթին խաչ տեղադրելու լուրը: Ուրեմն կ'արձանագրուի իրադրութիւններու

հետեւեալ յաջորդականութիւնը: Պատարագի արտօսութիւն առանց խաչի, ապա խաչի տեղադրում, զուգահեռ՝ Անիի մէջ նամագի արարողութիւն:

Անշուշտ պատահականութեան պէտք չէ վերագրել թրքական կողմէն առնուած քայլերու այս հաւասարակշռութեան խաղը: Չմոռնանք, որ սահմանադրութեան բարեփոխում եւ Թուրքիոյ երրօրականացում առաջադրած այսօրուան իշխանութիւնները իսլամական բնութագիրը կը կրեն եւ կրօնական թեմաները լիարժէք կ'օգտագործեն քաղաքական առաւելներ ապահովելու համար: Ներքին-արտաքին շահադիտական մօտեցումներու ընդհանուր շրջագիծին մէջ պէտք է դիտարկել կիրարկուող թրքական խաղը եւ ըստ այնմ քաղաքական գնահատական տալ դիպաշարին:

Պատարագի արտօսութիւնը եթէ դժգոհ կը ձգէ իսլամ գանգուածը, պէտք է պատարագը թոյլ տալ անխաչ գմբէթով: Եթէ խաչի տեղադրումը այս անգամ դժգոհ կը ձգէ թուրք ազգայնականութիւնը, պէտք է արտօսել եւ քաջալերել Անիի Մայր տաճարին մէջ նամագի արարողութիւնը:

Մինչ այդ Երրօրային ըսել, թէ Թուրքիոյ այսօրուան իշխանութիւնները կը վերանորոգեն հայկական եկեղեցի, այնտեղ կ'արտօսեն պատարագ եւ նոյնիսկ խաչով կ'օժտեն անոր գմբէթը. միւս կողմէ՝ թուրք ազգայնականութիւնը կը համոզեն, որ պատարագի թոյլտուութիւնը անխաչ գմբէթի պայմանով է եւ թէ բացառապէս տարին մէկ անգամուան համար է այդ արտօսութիւնը. իսկ այդ օրէն բացի որեւէ օր բացառուած է այնտեղ աղօթք բարձրացնելը: Թէ՛ իշխանութիւններուն կողմէ արտօսելի է նաեւ հայկական եկեղեցիներուն իբրեւ մզկիթ օգտագործումը:

Այս բոլորին մէջ կարելի է փորձ կատարել դրական մտորումներ զարգացնելու՝ եզրակացնելու համար, որ ի վերջոյ հայկական եկեղեցիներ վերանորոգելու շարքի մը կը ձեռնարկուի եւ թէկուզ տարին մէկ անգամուան համար պատարագ կը մատուցուի հայկական սրբավայրերու մէջ:

Չմոռնանք սակայն, որ վերանորոգումներն ու արտօսութիւնները հայկական կողմի նախաձեռնողականութեան հետ կապ չունին: Խաղը կը շարունակուի բացառապէս թրքական կողմին ճշդած կանոններով, թէկուզ միջազգային ընտանիքի ենթադրեալ պարագայական ճնշումներուն տակ: Թերեւս անելի ճիշդը՝ Թուրքիոյ կողմէ դէպի երրօրական ընտանիք առնուած քայլերու նկատառումներով:

Կրօնական պիտակներու տակ գործընթացը՝ պատարագով թէ նամագով զուտ քարոզչաքաղաքական թիրախներ կը հետապնդէ: Գործընթացը ճշդուած թիրախներէն շեղեցնելու նախաձեռնութիւններ առայժմ տեսանելի չեն հայկական կողմէն: Այլապէս, նամագին դիմաց, քրիստոնեայ աշխարհին մօտ ընդվզումի ալիքի բարձրացման նախանշաններ յառաջացնելու հայկական փորձեր զգալի կը դառնային:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ԻՐԱՆ ԿԸ ՇԵՇՏԵՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱՐԶԻՆ ՄԷՋ

ԱՌԿԱՅ ՆԵՐՈՒԺԻ ԼԻԱՐԺԷՔ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյան անցեալ շաբաթավերջին ընդունեց Իրանի առեւտուրի, արդիւնաբերութեան եւ հանքերու պալատի նախագահ Մոհամետ Նահաւանտիանի գլխավորած պատուիրակութիւնը:



Հանդիպումին ներկայ էին նաեւ Հայաստանի մէջ Իրանի արտակարգ եւ լիազօր դեսպան Սեյեդ Ալի Սադայիան եւ Հայաստանի առեւտրական- արդիւնաբերական պալատի նախագահ Մարտին Սարգսեան:

Վարչապետ Սարգսեան բարձր գնահատեց երկու երկիրներուն միջեւ ձեւաւորուած բարեկամական յարաբերութիւններու մակարդակը եւ կարելոր նկատեց տնտեսական փոխադարձ գործակցութեան խորացումը:

Զրուցակիցները քննարկեցին տնտեսական համագործակցութեան ընդլայնման կարելիութիւնները՝ ընդգծելով այս մարզին մէջ առկայ մեծ ներուժի լիարժէք օգտագործման անհրաժեշտութիւնը:

Մոհամետ Նահաւանտիանը մասնաւորապէս առաջնահերթութիւն նկատեց երկկողմանի ապրանքաշրջանառութեան ծաւալի մեծացումը եւ գործակցութեան խորացումը արդիւնաբերութեան, զբօսաշրջութեան եւ ենթակառոյցներու զարգացման ուղղութեամբ:

Երկու կողմերը կարելոր նկատեցին Հայաստանի եւ Իրանի սեփական մարզերուն միջեւ կապերու զարգացումն ու առեւտրական ծառայութիւններու մատուցման մարզերուն մէջ համագործակցութեան սերտացումը: Այդ գծով քննարկուեցան հայ-իրանական միացեալ ձեռնարկութիւններու ստեղծման հեռանկարները:

Ս. ԷԶՄԻԱԾԻՆ ԽՍՏԻ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԵ ԱՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ ՆԱՄԱԶԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը «քաղաքական սադրանք» նկատեց Անիի Մայր տաճարին մեջ թուրք ազգայնականներու կատարած նամագը:

«Վրդովմունքով տեղեկացանք, որ Թուրքիոյ իշխանութիւններուն արտօնութեամբ 1 հոկտեմբերին Ազգայնական շարժում կուսակցութեան կողմէ նամագ կազմակերպուած է Անիի հայոց Ս. Աստուածածին Մայր տաճարին մէջ», նշուեցաւ 2 հոկտեմբերին Ս. Էջմիածինի հրապարակած հաղորդագրութեան մէջ:

«Ատիկա փորձ մըն է ժխտելու հայկական պատկանելիութիւնը Անիի Մայր տաճարին, որ աղօթագրկուած է Հայոց ցեղասպանութեան պատճառով: Մայր Աթոռ Ս. Էջմիածինը կը դատապարտէ նմանօրինակ գործողութիւններ, որոնք կը սերմանեն անհանդուրժողութիւն եւ հայատեացութիւն: Բացարձակապէս անընդունելի է նաեւ քրիստոնէական սրբավայրի մը տրամադրումը նամագի համար՝ այն պարագային, երբ հետեւողականօրէն կ'արգիլուի քրիստոնէական ժառանգութեան իրաւատերերուն պաշտամունք մատուցել իրենց իսկ տաճարներուն մէջ: Այսպիսով, թրքական իշխանութիւնները կը շարունակեն իրենց քայլերը՝ ուղղուած հայկական յիշատակներու ոչնչացման եւ հայոց պատմական սրբավայրերու ու մշակութային արժէքներու իւրացման», աւելցուց Մայր Աթոռը՝ ընդգծելով, որ թուրք ազգայնականներու այս քայլը «ոչ մէկ առնչութիւն ունի հոգեւոր- բարեպաշտական գազացումներու եւ կրօնական ազատութեան ու իրաւունքներուն հետ»:

«Սոյն քայլով Թուրքիա վերստին ի դերել կը հանէ Հայաստանի եւ միջազգային հանրութեան ջանքերը՝ ի նպաստ հայ-թրքական երկխօսութեան հաստատման եւ յարաբերութիւններու կարգաւորման», կ'ըսուի Ս. Էջմիածինի հաղորդագրութեան մէջ:

ԶՈՒԻՑԵՐԻԱ ԿԸ ՓՈՐՁԷ ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՑՆԵՂ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀՈԼՈՎՈՅԹԸ

Թրքական «Հիւրրիյէթ» օրաթերթը վկայակոչելով թրքական դիւանագիտական անանուն աղբիւրներ կը հաղորդէ, որ Զուիցերիոյ արտաքին գործոց նախարարութեան ներկայացուցիչները Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններու կարգաւորման հոլովոյթը վերականգնելու համար օրերս հեռաձայնային հաղորդակցութիւն ունեցած են հայ եւ թուրք գործընկերներու հետ:

Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութեան ներկայացուցիչը յայտնած է, որ «Զուիցերիան որոշ ժամանակ առաջ մեզի հետ հեռաձայնային կապ հաստատեց եւ տեղեկացուց, որ կ'ուզէ վերսկսիլ սառեցուած հոլովոյթին: Մենք փոխանցեցինք, որ մեզի համար որեւէ խնդիր չկայ: Կարելի է ըսել, որ անոնք իսկ առաջարկը ըրած են նաեւ Երեւանին»:

«Մենք կ'ուզենք Հայաստանի հետ հաստատել բարի դրացիական յարաբերութիւններ: Հոլովոյթի սառեցումին սկսաւ Հայաստանը, հետեւաբար արձանագրութիւնները նորէն տաքցնելու համար պէտք է քայլ առնէ իսկինքն Հայաստան: Մեր դռները միշտ բաց են բարի նպատակներով մերձեցման համար»:

Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան մամլոյ բանբեր Տիգրան Բալայեան պատասխանելով «Tert.am» լրատուական կայքէջի՝ թրքական լրատուամիջոցներուն տարածած տեղեկութեան ճշմարտութեան համապատասխանութեան մասին հարցումին, բաւարարուած է ըսելով, որ «արձանագրութիւններուն վերաբերեալ որեւէ բանակցութիւն տեղի չ'ունենար»:

«ՊՐԱՅՁԱՅԻ ԵՒ ՌԻՔԱՐՏՈՆԷԻ

ԹԵԿՆԱԾՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ ԾԵՐԱԿՈՅՏԻ ՕՐԱԿԱՐԳԻՆ ՎՐԱՅ Է,

ԲԱՅՑ ՔՈՒԷԱՐԿՈՒԹԵԱՆ ՊԻՏԻ ՉԴՐՈՒԻ...»

Կ'ԸՍԷ ԿԻՐՕ ՄԱՆՈՅԵԱՆ

ՀՅԴ Բիւրոյի Հայ դատի եւ քաղաքական հարցերու գրասենեակի պատասխանատու Կիւրօ Մանոյեան «panorama.am» լրատուական կայքէջին տեղեկացուց, որ Ազրպէյճանի եւ Թուրքիոյ մէջ Միացեալ Նահանգներու դեսպանի թեկնածուներ Մեթիւ Պրայզայի եւ Ֆրենսիս Ճոզըֆ Ռիքարտոնէի հարցը Միացեալ Նահանգներու Ծերակոյտի օրակարգին մէջ կը գտնուի, բայց քուէարկութեան պիտի չդրուի:

«Հարցը Ծերակոյտի օրակարգին մէջ կը գտնուի եւ այդ պատճառով ծերակուտականներ Ռոպըրթ Մենենտես եւ Պարպարա Պոքսըր յաջողեցան կասեցնել Պրայզայի քուէարկութեան հարցը, այլապէս, եթէ օրակարգին մէջ չ'ըլլար, չէին կրնար այդպէս վարուիլ», պարզաբանեց Մանոյեան:

Ըստ անոր, հաւանական է, որ ծերակուտականները միաձայնութեամբ քուէարկեն, որպէսզի բոլոր հարցերը մէկ կողմ դրուին ու այս կամ այն թեկնածուի հարցը դրուի քուէարկութեան, այն ալ ձայնային քուէարկութեան:

«Ձայնային քուէարկութիւնը այն է, որ նախագահողը կը հարցնէ, թէ որո՞նք համաձայն են, եւ «այո» կամ «ոչ» պատասխաններու յարաբերակցութեան հիման վրայ հարցը կ'որոշուի: Բայց որպէսզի այդ քուէարկութիւնը տեղի ունենայ, ծերակուտականները պէտք է միաձայնութեան գան:

Աւանդութեան վրայ հիմնուած կարգը այնպէս է, որ եթէ նոյնիսկ մէկ ծերակուտական ըսէ, որ ինք համաձայն չէ, որ հարցը քննարկուի, ապա չի քուէարկուիր», նշեց Կիւրօ Մանոյեան:

Մանոյեան ընդգծեց, որ հարցը կը մնայ օրակարգին մէջ մինչեւ Ծերակոյտի նոր նստաշրջանի սկիզբը՝ մինչեւ յունուար: «Այդ ժամանակ Սպիտակ տունը կը վերանշանակէ նոյն թեկնածուները, կամ կը փոխէ եւ նոր թեկնածու կը ներկայացնէ», աւելցուց Կիւրօ Մանոյեան:

Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ «ՀԱՒԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ» ԱՂՕԹՔԸ 33 ԼԵՁՈՒՆԵՐՈՎ

Քանի մը ամիս առաջ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը 33 լեզուներով լոյս ընծայեց Ս. Ներսէս Շնորհալի հայրապետին «Հաւատով խոստովանիմ» աղօթքը, որ նախապէս, 1862-ին Վենետիկի Միսիթարեան միաբանութեան կողմէ հրատարակուած էր:

Աստուածաշունչ մատենին եւ Ս. Գրիգոր Նարեկացիի «Նարեկ»ին կողքին, «Հաւատով խոստովանիմ»ը անկասկած կը հանդիսանայ հայ հաւատացեալին բարձի գիրքը: Մեզմէ ո՛վ որ իր ամէնօրեայ մտերմութիւնը չի վերապրիր այս երեք սուրբ գիրքերուն հետ, կը նշանակէ, թէ իր հայ քրիստոնեայի ինքնութեան հաւատարմութեան մէջ խախտած է եւ պետք է վերադառնայ Հայ եկեղեցւոյ սուրբ աւագանէն եւ լուսափայլ միւռնէն իր ստացած աստուածահաճոյ եզակի կնիքին եւ աստուածային սրբազան պատկերին:

Մեր ընտանիքներուն, դպրոցներուն եւ եկեղեցիներուն մէջ մեր մէջ ծրարուած մանկութեան յուշերը անպայմանօրէն անմոռաց կապ մը պիտի յայտնաբերեն, եթէ փորձենք ներամփոփ պահու մը վերադառնալ մեր հի՛ն ու աղուոր օրերուն, երբ հայ մամիկներուն եւ պապիկներուն աղօթամրմունջ շունչով կը ջերմանար մեր հայ քրիստոնեայի հոգին, ու երբ մեր հայրերն ու մայրերը միայն եկամտաբեր միջոցներ չէին, երբ կրօնական դաստիարակութիւնը մեր հայեցի կրթութենէն անբաժան էր, ու երբ մեր կիրակնօրեայ վարժարաններն ու պատանեկան եւ երիտասարդական միութիւնները միասնաբար ու ներդաշնակ գործակցութեամբ վաղուան հայ մարդը կը կերտէին, եւ երբ մեր եկեղեցիներուն մէջ հայ աղօթքն ու շարականը հայ հաւատացեալներուն շրթներուն վրայ կը ծաղկէր եւ կ'երկարածգուէր անոնց բովանդակ կեանքին երկայնքին: Ընդունինք, թէ ինչ-ինչ ենթակայական եւ առարկայական պատճառներով քանդուած է մեզ հայօրէն քրիստոնեայ պահող ընտանիք, դպրոց եւ եկեղեցի իրերագոյց եռամասնեայ օղակը եւ լքուած ենք «ընտրովի» եւ շատ յաճախ «օտար» կրօնական հոսանքներու հովին ու կամայ-ակամայ խաթարած նաեւ մեր ազգային պատկանելիութիւնը:


Ս. Ներսէս Շնորհալի հայրապետ (1102-1173), իր ապրած ժամանակաշրջանի ժողովրդային բարեպաշտութեան վերլուծումը կատարելով եւ յոռի երեւոյթները սրբագրելու նախանձախնդրութեամբ, ո՛չ միայն «Հաւատով խոստովանիմ» աղօթքը կը գրէր, այլ զայն կ'օժտէր այսօր եւս այնքա՛ն այժմեական հնչող խրատական նախաբանով մը (դժբախտաբար այս հայրական խրատը միայն լատիներէն դրուած է թէ՛ Վենետիկի եւ թէ՛ Անթիլիասի հրատարակութիւններուն սկիզբը), որ այս առթիւ կը յանձնեմ ձեր ուշադրութեան՝ միաժամանակ կոչ ընելով, որ 33 լեզուներով հրատարակուած «Հաւատով խոստովանիմ» աղօթագիրքը անգամ մը եւս դարձնենք մե՛ր գիրքն ու մե՛ր աղօթքը եւ զայն ամէն օր կարդանք ու զայն մեր սիրելիներուն ալ սորվեցնենք: Առաւել, Անթիլիասի այս նոր հրատարակութիւնը տարածենք մեր օտար բարեկամներու շրջանակին մէջ՝ Ս. Ներսէս Շնորհալիի աղօթքով մեր հայ քրիստոնեայի արդար հպարտութիւնն ու անջնջելի ճառագայթուն դրոշմը ցոլացնելով:

ՆԱՐԵԿ ԵՊՍ. ԱԼԵՄԷՉԵԱՆ

Մեր Պատմություն


Ուրֆա (Եդեսիա)

Եդեսիա, Անտիոքեա, Անտիոքիա, Ար-Ռուհա, Եդեսա, Եդեսսա, Էդեսա, Էդեսսա, Հուստինիանուպոլիս, Ռագես, Ռախար, Ռոսայա, Ռոթասիա, Ռոհաս, Ռուա, Ռուգայի, Ռուհա, Բագա, Բուհա, Ուռհա, Ուռֆահ, Ուր, Ուրա, Ուրիա, Ուրիտա, Ուրֆա, Օրխոն, Օրիայ, Օրրե, Օրրիա, Օրրիոն — Քաղաք Վերին Միջագետքում, որը հնում կոչում էր նաև Հայոց կամ Հայկական Միջագետք։ Փռուած է հարթավայրում, որն արեւմուտքից և մասամբ հարավից պատած է լեռներով։ Բուն քաղաքի տեղադրավայրը սակավաջուր է, բայց շրջակայքում կա 2 լճակ, իսկ խմելու ջուրը բերուել է դրսից և ցանցաւորուել քաղաքի թաղամասերում։



Ե-ի մասին վկայութիւններ ունեն յունական, հռոմէա-քիզանդական, ասորական, հայկական, պարսկական, արաբական և այլ հեղինակներ։ Հնում եւ մասամբ միջին դարերում սովորաբար կոչուել է Ե, իսկ համեմատաբար նոր ժամանակներում արաբների, ապա՝ թուրքերի կողմից կոչուեց Ուռհա կամ Ուրֆա։ Քաղաքի հիմնադրման մասին պահպանվել են մի քանի ավանդութիւններ։ Դրանցից մէկի համաձայն՝ Ե-ն հիմնադրել է Բելը, ըստ մի այլ ավանդության՝ այն կառուցուել է Աստուածաշնչում հիշատակուած, Ուր կոչուած քաղաքի աւերակների վրայ եւ Ալեքսանդր Մակեդոնացու կամ նրա զորավար Մելեկոսի դստեր Էդեսի անունով էլ կոչուել է Ե։ Յունական և հռոմէական պատմագիրների ասելով՝ Ե-ն հիմնադրել է Ասորիքի Մելեկոս թագավորը (4-րդ դ. մ.թ.ա.)։

Այլ աղբիւրների համաձայն՝ Ե հիմնովին վերաշինել է Հայոց կիսաաւանդական թագաւոր Աբգարը Մծբինից այստեղ տեղափոխելով իր արքունիքը։ Նույն աղբիւրները վկայում են, որ Աբգարն այստեղ հունա-հռոմէական թատրոնների օրինակով շինել է թատրոնի շէնք, ինչպէս նաև՝ արքունական շքեղ պալատ ու հոյակապ եկեղեցիներ։ Իսկ Աբգարի յաջորդ Երուանդ թագաւորը, ըստ նոյն աւանդութիւնների, Ե-ն թողել է Հռոմին, իսկ ինքը հաստատուել նախ Արմաւիրում, ապա՝ իր հիմնադրած Երուանդաշատում։



Ե-ն Օսրոենի փոքրիկ թագաւորութեան մայրաքաղաքն էր (2-րդ դ. մ.թ.ա.)։ Տիգրան Բ-ի օրօք (95—56 թ մ.թ.ա.) այդ թագաւորութիւնը միացուեց հայկական պետութեանը, և նրա մայրաքաղաք Ե-ն դարձաւ հայկական մշակոյթի կենտրոններից մէկը։ Սակայն Ե-ն հայկական պետութեան կազմում

երկար չի մնում. 60-ական թթ. (մ.թ.ա.) այն անցնում է Հռոմին, իսկ հետագայ դարերում երկար ժամանակ դառնում կռուախնձոր բիզանդացիների, պարսիկների, արաբների և այլոց միջև:

1144 թ. Ե-ն գրաւում, աւերում և բնակչութեանը բնաջնջում է Հալէպի էմիր Ջանգին: Քաղաքի համար ճակատագրակ ան այդ արհաւիրքին է նուիրում Ներսէս Շնորհալու յայտնի ողբը՝ «Ողբ Եդեսիոյ»-ն, որտեղ հայրենասէր հեղինակը սրտի կսկիծով է նկարագրում ծաղկուն քաղաքի աւերումն ու բնակչութեան զանգուածային բնաջնջումը: Հետագայում Ե ընդմիջտ ընկավ թուրքական տիրապետութեան տակ և առ այսօր մնացել է իբրեւ սովորական գաւառական քաղաք:

Հնում Ե-ն մշակոյթի մեծ կենտրոն էր: Այստեղ գործում էր բարձր տիպի դպրոց՝ ճեմարան, որտեղ ուսանելու էին գալիս տարբեր տեղերից: Ե-ում կրթութիւն են ստացել և բաւական թուով հայ երիտասարդներ: Այստեղ է արարուել հայոց մեսրոպեան գիրը, այստեղից էր 12-րդ դ. հայ մատենագիր-ժամանակագիր Մատթէոս Ուռեայեցին:

Ե-ն ամրացուած ք էր: Այն ուներ իր ամուր բերդը, որ գտնուում էր քաղաքի հարաւային կողմի սեպածէւ ժայռի վրա: 19-րդ դ. սկզբում բերդում բնակւում էին 60 տուն թուրք բնակիչներ: Ուներ մէկ մզկիթ, որը հնում հայկական եկեղեցի էր: Պարիսպները շարուած էին սպիտակ որձաքարով և բոլոր կողմերից շրջափակւում էին քաղաքը: Պարիսպների շուրջը խոր խրամն էր՝ 10—12 կմ ընդհանուր երկարութեամբ:

Հին և միջնադարեան Ե-ի բնակ չութեան ընդհանուր թուի մասին արժանահաւատ վկայութիւններ չկան: Սակայն հաւանական է, որ նրա բնակչութեան թիւը 50—60 հազար մարդուց պակաս չի եղել: Հակասական են նաև նոր ժամանակներում նրա բնակչութեան վերաբերեալ եղած աղբիւրները: 19-րդ դ. սկզբներին Ե-ն ուներ 12000 տուն, որից 2000-ը՝ հայկական:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեակին ուներ շուրջ 55 հազար բնակիչ, որից 12000-ը՝ հայեր: 1959-ին Ե-ն ուներ 59910, 1970-ին՝ շուրջ 100 հազ բնակիչ: 1895 և 1915 թթ. հայերի ջարդերի ժամանակ Ե-ում սպանուեցին հազարաւոր հայեր, իսկ կենդանի մնացածներին տեղահանեցին տարբեր ուղղութիւններով: Այժմ քաղաքում ապրում է շուրջ 1000 հայ, որոնք այստեղ են վերադարձել տարագրութիւնից: Ե-ի հայերը զբաղւում էին արհեստներով, երկրագործութեամբ: Արհեստներից առանձնապէս յայտնի էին կտաւագործութիւնը, գորգագործութիւնը, կավագործութիւնը: Այստեղ ներկայում գործում են թեթէւ և սննդի արդիւնաբերութեան ձեռնարկութիւններ:

Ե-ն հայկական մշակոյթի նշանակալի կենտրոն էր նաև նոր ժամանակներում: Մինչև Առաջին համաշխարհային պատերազմն այստեղ գործում էր 15 դպրոց՝ 99 ուսուցիչներով: Ք-ում կային հայկական մշակոյթային և հայրենակցական ընկերութիւններ, թատրոններ, գրադարաններ, երիտասարդական միութիւններ: Ուներ երեք գործող եկեղեցի, որոնցից մէկի կառուցումը աւանդաբար վերագրում էին Աբգար թագաւորին: Նրա եկեղեցիներից են ս. Հովհաննէսը, ս. Սարգիսը, ս. Սովին, ս. Թորոսը և այլն: Ե-ի 15 մզկիթներից 10-ը հնում եղել են հայկական եկեղեցիներ և մզկիթների են վերածուել 12—17-րդ դարերում:

Քաղաքի փողոցները սալայատակուած են: Նշանավոր կառոյցներից են նաեւ փաշայի պալատները, վարչական զանազան շէնքեր և վերոյիշեալ պատմական—պաշտպանական յուշարձանները: Ե-ի շրջակայքը հարուստ է զանազան ժամանակների յուշարձանների ու հնութիւնների՝ վանքերի, եկեղեցիների, մզկիթների, ամրոցների, բնակավայրերի աւերակներով:



**«ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԿԸ ԼՈՒԾՈՒԻ ԹՈՒՐԲԻՈՑ ԿՈՂՄԷ ՀԱՅՈՑ
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱԶՈՒՄՈՎ ԵՒ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՎ»
ԿՐՄԷ ՏՈՔԹ. Յ. ԹԱՍԼԱՔԵԱՆ**

Հայ դատի պատմական ու քաղաքական բնույթին, հայելթուրք յարաբերություններուն արձանագրած վերջին հանգրուանի զարգացումներուն, ինչպէս նաեւ դէպի Միջին Արեւելք թրքական «ներթափանցումին» մասին Լիբանանի մէջ հրատարակուող եւ շրջանային ռազմավարություններուն մասին վերլուծումներ եւ ուսումնասիրություններ բովանդակող «Շուուն Աուսաթ» պարբերաթերթը հարցազրոյց մը կատարեց Լիբանանի Հայ դատի մարմինի անդամ տոքթ. Յովհաննէս Թասլաքեանին հետ:

Այս սիւնակներով կ'անդրադառնանք Յ. Թասլաքեանին ունեցած շահեկան հարցազրոյցէն որոշ բաժիններու:

Պատասխանելով Հայկական հարցը 1915-ին գործադրուած Հայոց ցեղասպանութեան հետ առնչուած դատ մը ըլլալու հարցումի մը՝ Յ. Թասլաքեան շեշտեց, որ Հայկական հարցը, իբրեւ քաղաքական դատ, սկսած է 1878-ին, սակայն իբրեւ գոյութեան խնդիր՝ ան սկսած է դարեր առաջ, այն օրերէն, երբ հայերը կը գտնուէին թրքական տիրապետութեան տակ:

Այս ծիրին մէջ Յ. Թասլաքեան կը նշէ, թէ հայերը թրքացնելու առաջին փորձը եղած է 1747-ին, երբ ներկայ Թուրքիոյ հիւսիսարեւելեան շրջանին մէջ՝ Համշէնի մէջ ապրող 40 հազար հայերու պարտադրուեցաւ կրօնափոխ դառնալ, այս պարագային՝ իսլամանալ եւ թրքանալ:

Ակնարկելով այն մատնանշումին, թէ Օսմանեան կայսրութեան մէջ հայերը յարգուած էին եւ անոնք նոյնիսկ ստանձնած էին նախարարական պաշտօններ, Յ. Թասլաքեան յայտնեց, որ երբ Օսմանեան կայսրութիւնը իր ամենէն հզօր կացութեան մէջ կը գտնուէր, ան Օսմանեան կայսրութեան մէջ ապրող այլ ազգերու հետ հարցեր չունէր: Սակայն, երբ 1828-ին Յունաստան անկախացաւ եւ ռուսական ցարական իշխանութիւնները սկսան յառաջանալ դէպի օսմանեան հողեր, Օսմանեան կայսրութիւնը նշմարեց, թէ կայսրութիւնը հետզհետէ պիտի տկարանայ եւ յատկապէս Արեւմուտքը գայն կրնայ քայքայել, նկատի ունենալով, որ Պալքանեան երկիրները իրերայաջորդ անկախութիւններ կ'երտեցին: Իսկ արեւելքի մէջ հայերը սկսած էին վերակազմակերպուիլ, սակայն անոնք անկախութեան մասին ոչինչ կը խօսէին մինչեւ 1918: Հայերուն ամբողջ պահանջը Օսմանեան կայսրութեան մէջ բարենորոգումներ կատարել էր, որպէսզի կարելի ըլլար հայոց կենցաղային պայմանները բարելաւել, ինչպէս նաեւ՝ մշակութային ու տնտեսական բարգաւաճում ապահովել: Այո՛, ճիշդ է այն իրականութիւնը, որ հայերը նախարարներ տուած են, սակայն անոնք մեծահարուստ հայեր էին, որոնք ներդաշնակութեամբ կ'ապրէին Օսմանեան կայսրութեան հետ: Սակայն հայոց 99 առ հարիւրը կ'ապրէր ահաւոր պայմաններու տակ, կ'ենթարկուէր տնտեսական չարաշահումի եւ ցեղային խտրութեան, յատկապէս պատմական Հայաստանի՝ ներկայ Թուրքիոյ արեւելքը եւ հարաւ-արեւելքը գտնուող շրջաններուն մէջ:

Հետեւաբար հայոց դէմ խտրութիւնը միշտ ալ եղած է, սակայն՝ ոչ Պոլսոյ մէջ, որ կը նկատուէր «Օսմանեան կայսրութեան միջնաբերդը», ըսաւ ան՝ շեշտելով, որ երբ Օսմանեան կայսրութեան մէջ ապրող ազգերը անկախութիւն պահանջած են, թուրքերուն հակազդեցութիւնը վայրագ եւ բիրտ եղած է բոլորին դէմ: Հայոց կողքին, ցեղային խտրութեան եւ բռնութեան ենթարկուած են ու տառապած նաեւ սերպերը, պուլկարները եւ քիւրտերը: Յ. Թասլաքեան յայտնեց, որ Օսմանեան կայսրութեան մէջ հայոց իրաւունքները՝ ազատութիւնը, կրօնի, խօսքի ու լեզուի ազատութիւնը, ինչպէս նաեւ բոլորին միջեւ հաւասարութիւնը պահանջող ազգային շարժումի առաջնորդը եղաւ Հայ լեզափոխական դաշնակցութիւնը, որ ծնաւ ժողովուրդին ցաւերէն, եւ որուն պայքարը դարձաւ հայոց ազատութիւնն ու բարօրութիւնը ապահովելը: «ՀՀԴ պահանջեց Օսմանեան կայսրութեան մէջ ժողովրդավար պետութիւն մը, ուր մարդիկ կ'ապրին իրարու հաւասար, կ'ունենան կրօնի ազատութիւն, ուր վերջ կը գտնեն ցեղային խտրութիւնն ու բռնութիւնները, եւ ուր ժողովուրդները իրենց ազգային ինքնութիւնը, քաղաքակրթութիւնը եւ մշակոյթը պահպանելու առիթ կ'ունենան:

ՀՀ-ի աշխատեցաւ ի թրքական պետութիւնը ժողովրդավար դարձնել, սակայն այդ ջանքերը ի դերել ելան, երբ իթթիհատական թուրքերը, որոնք հայերուն, յոյներուն եւ արաբներուն խոստացած էին իսկական ժողովրդավարութիւն հաստատել եւ փոքրամասնութիւններուն իրաւունքները պաշտպանել, դրժեցին իրենց խոստումը եւ որոշեցին հիմնել թուրք ցեղային պետութիւն մը՝ պահպանելու համար զայն», ըսաւ ան:

Պատասխանելով այն հարցումին, թէ ի՞նչ հիման վրայ հայերը 1915-ի սպանդները ցեղասպանութիւն կը կոչեն, Յ. Թասլաքեան շեշտեց, որ ազգային եւ կրօնական պատկանելիութիւն ունեցող եւ տեղւոյն իշխանութիւններէն մասնակի թէ ամբողջական տարբերութիւն ունեցող որեւէ ժողովուրդի դէմ կանխամտածուած բնաջնջումի գործադրութիւնը կը նկատուի ցեղասպանութիւն:

Յ. Թասլաքեան ներկայացուց Օսմանեան կայսրութեան կողմէ գործուած ամբողջ բեմագրութիւնը, որուն գործադրութիւնը առաջնորդեց ի վերջոյ հայոց դէմ ցեղասպանութեան գործադրութեան: «Իսկ ինչ կը վերաբերի հայերը բնաջնջելու որոշումներուն մասին փաստաթուղթերու եւ ապացոյցներու, ապա իւրաքանչիւր ոճրագործ անպայման կ'ոչնչացնէ իր ոճիրը փաստող որեւէ փաստ, սակայն այդ ջանքերով հանդերձ, կան բազմաթիւ փաստաթուղթեր, որոնք կ'ապացուցեն, թէ հայոց դէմ գործուածը կանխամտածուած ու ծրագրուած ցեղասպանութիւն էր: Այս ծիրին մէջ հարկ է նշել, որ գերմանացի պատմաբան Յիլմար Զայգեր 1996-ին օսմանեան արխիւներուն մէջ ուսումնասիրած է 1915-1917 ժամանակաշրջանը եւ ապա իր ուսումնասիրութիւնը հիմնաւորած է այն իրականութեան վրայ, թէ գտած է 350 փաստաթուղթ, որոնք կը հաստատեն, թէ Օսմանեան կայսրութիւնը գործադրած է Հայոց ցեղասպանութիւնը: Տակաւին չենք խօսիր Օսմանեան կայսրութեան մէջ իթթիհատականներուն փլուզումէն ետք հիմնուած առաջին դատական իշխանութիւններուն եւ անոնց կատարած դատավարութիւններուն ընթացքին արձանագրուածայն խոստովանութիւնները, թէ իրենք թրքական պետութեան որոշումը կը գործադրէին՝ ջարդերը գործելով, սակայն փորձած են այս կամ այն ձեւով հայուն գոյութիւնը պահել: Հետեւաբար նման արտայայտութիւններ խոստովանութիւններ են, թէ թրքական պետութիւնը որոշած էր հայութիւնը բնաջնջել», շեշտեց Յ. Թասլաքեան:

Պատասխանելով այն հարցումին, թէ ինչո՞ւ հայերը կը մերժեն հայ-թուրք պատմաբաններու միացեալ յանձնախումբի մը կազմութիւնը՝ քննարկելու համար պատմական իրողութիւնները, Յ. Թասլաքեան շեշտեց, որ հայոց դէմ գործադրուած ցեղասպանութիւնը արդէն իսկ փաստուած է եւ այսօր բազմաթիւ պետութիւններ, հայոց կողքին, Թուրքիայէն կը պահանջեն ճանչնալ Ցեղասպանութիւնը: «Իսկ ինչ կը վերաբերի Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Ահմետ Տաւութօղլուի կատարած այն յայտարարութեան, թէ հայերը 1915-ին տառապած են, սակայն պետք է անոնք նաեւ ընդունին եւ ճանչնան մեր տառապանքը, ինչպէս նաեւ յիշեն, որ Կովկասէն Թուրքիա բռնագաղթ տեղի ունեցած է, հարկ է նշել, թէ այդ բռնագաղթը կատարուած է 1830-1840-ին, երբ Ռուսիա չէզեններուն եւ Հիւսիսային Կովկասի բնակիչներուն դէմ պատերազմ յայտարարած էր. այդ մէկը ոչ մէկ ձեւով հայերուն կը վերագրուի: Հետեւաբար մենք պետք է միասին նստինք ըսելու համար, որ օսմանեան պետութիւնը իր իթթիհատական վարչակարգով ոճրագործ էր եւ այդ վարչակարգն է, որ օսմանեան պետութիւնը առաջնորդած է հայոց դէմ ցեղասպանութիւն գործադրելու: Տաւութօղլուէն մեր պահանջը այս է, սակայն իրենց ցաւերը եւ մեր տառապանքը նոյն նժարի վրայ դնելու տրամաբանութիւնը կտրականապէս մերժելի է», ընդգծեց տոքթ. Թասլաքեան:

Յ. Թասլաքեան հաստատեց, որ ցեղասպանութիւնը զուտ քաղաքական որոշում է՝ անելցնելով, որ հայոց դէմ թրքական ատելութիւնը եւ թշնամանքը մինչեւ օրս ի գօրու է: Ան շեշտեց, որ Թուրքիա պարտաւոր է ճանչնալ Հայոց ցեղասպանութիւնը եւ հատուցել հայութեան՝ անոր վերադարձնելով ազգային բոլոր իրաւունքները: «Ոմանք հարց կու տան, թէ հողերը վերադարձուելէ ետք հայերը պիտի վերադառնա՞ն հոն ապրելու: Մենք կ'ըսենք, թէ այդ որոշումը կը պատկանի իւրաքանչիւր հայ անհատի, որ կ'ապրի տարբեր գաղութներու մէջ, սակայն իրաւունքը սակարկութեան չ'ենթարկուիր այն մօտեցումով, որ կը վերադառնա՞ս քու հայրենիքդ, թե՞ ոչ», անելցուց ան:

Յ. Թասլաքեան շեշտեց, որ Թուրքիա հայութեան հանդէպ նիւթական եւ բարոյական հատուցումներ կատարելու իր պարտաւորութիւնը պետք է կատարէ: Պատմական

Հայաստանի տարածությունը 300 հազար քառ. քմ. է եւ այդ տարածութեան մէջ կ'ապրին նաեւ մեծ թիւով քիւրտեր: Սերի դաշնագիրով այդ հողերը պէտք էր յանձնուէին հայոց եւ քիւրտերուն, եւ այս լուծումը մեկնարկը կը հանդիսանայ նաեւ հայերուն եւ քիւրտերուն միջեւ բանակցութիւններուն, որովհետեւ անոնք երրորդ կողմ կը նկատուին: Ան շեշտեց, որ թրքական ինքնութիւն ստանալը ոչինչ կ'ըսէ հայերուն, իսկ հայոց դէմ ատելութիւն սերմանող թրքական պետութեան այսօրուան կեցուածքով կարելի չէ հայելութիւնը համաձայնութեան մը յանգիլ: Հարկ է հայկական եւ թրքական պետութեան միջեւ տրամաբանական սահման մը գծուի, որպէսզի երկու պետութիւնները դիւանագիտական յարաբերութիւններ հաստատեն, մարդկային յարաբերութիւններ սկսին զարգացնել եւ գտնեն այնպիսի լուծումներ, որոնք առիթ կու տան, որ երկու ժողովուրդները ապահովութեան եւ դրացնութեան սովորական ընթացքով շարունակեն ապրիլ:

3. Թաւաքեան նշեց, որ 1975-էն առաջ Թուրքիա կտրականապէս կը մերժէր արծարծել Ցեղասպանութեան հարցը, սակայն ի վերջոյ թրքական պետութիւնը սկսաւ այդ մասին դասաւանդել թրքական դպրոցներուն մէջ, սակայն՝ պատմութեան նենգափոխուած տարբերակով: Իսկ Հայ դատի գրասենեակներուն կողմէ տարուած աշխատանքներուն իբրեւ արդիւնք՝ բազմաթիւ պետութիւններու կողմէ Հայոց ցեղասպանութիւնը ճանչնալէ ետք, սկսաւ այլ հանգրուան մը, որուն ընթացքին այլախոհ թուրք մտաւորականներ սկսան ճանչնալ Ցեղասպանութիւնը: Իսկ այդ մէկուն փաստը այն է, թէ անցեալ տարուան ընթացքին 30 հազար թուրք մտաւորականներ ստորագրեցին հայ ժողովուրդին ուղղուած ներում հայցող խնդրագիր մը:

Ան դիտել տուաւ, որ ներկայիս ամէն ջանք ի գործ կը դրուի Թուրքիան ժողովրդավարականացնելու, աւելցնելով սակայն, որ Եւրոպական Միութեան անոր անդամակցութիւնը կը դիւրանայ, երբ ան հայութեան հետ ունեցած իր մէկ դարու հարցին համար փորձէ լուծումներ գտնել, եւ ոչ թէ հակառակը, որովհետեւ անկարելի է, որ ան Ե. Միութեան անդամակցի՝ Նախքան իր երկրին մէջ կատարելիք բարեկարգումները եւ պատմական իրողութիւնները ճանչնալն ու հատուցումներ կատարելը:

Միջին Արեւելքի մէջ թրքական դերակատարութեան եւ արաբ ժողովուրդին հետ լաւ յարաբերութիւններ մշակելու մասին հարցումի մը պատասխանելով՝ Յ. Թաւաքեան յայտնեց, որ Թուրքիա կը փափաքի Միջին Արեւելքի մէջ ներկայանալ Իսրայէլի դէմ դիմադրութեան շարժումներուն զօրակցի դերակատարութեամբ՝ փորձելով մրցիլ Իրանի հետ: «Մենք ներկայիս արաբական աշխարհին մէջ սկսած ենք տեսնել ծածանող թրքական դրօշներ, միւնչդեռ չորս տարի առաջ մենք այդ դրօշներուն փոխարէն կը տեսնէինք Հրէական դրօշները: Այս մթնոլորտին մէջ յստակ է երկու իրականութիւն, թէ՛ կա՛յ դերակատարութիւն մը եւ կա՛յ թատրոն մը», նշեց ան:

Հայ - թրքական յարաբերութիւններուն մէջ Սուրիոյ դերակատարութեան մասին հարցումի մը պատասխանելով՝ Յ. Թաւաքեան յայտնեց, որ Սուրիա կը զօրակցի Հայաստան - Թուրքիա հարցերուն լուծման եւ մնայուն կերպով քաջալեր կը հանդիսանայ լուծման փորձերը առկայ պահելու տեսակէտին:

Հայութեան եւ արաբ ժողովուրդին միջեւ յարաբերութեան ակնարկելով՝ Յ. Թաւաքեան յայտնեց, որ Թուրքիա մնայուն կերպով դաւանանքի եւ կրօնական պատկանելիութեան շիղիին հետ կը փորձէ խաղալ՝ հայոց եւ արաբ ու իսլամ ժողովուրդներուն միջեւ տարբերութիւնները մատնանշելու համար:

«Սակայն Հայկական հարցը երբեք կրօնական բնոյթ չունի, այլապէս քրտական հարց պէտք չէր ըլլար: Արաբական երկիրներու մէջ իշխանութիւնները չեն անդրադառնար Հայկական հարցին, այլ կ'անտեսեն զայն, հետեւաբար մենք անոնց կեցուածքներէն տեղեակ չենք: Սակայն նկատի ունենալով, որ արաբական աշխարհի մէջ ապրող հայութեան մեծամասնութիւնը կ'ապրի Լիբանանի եւ Սուրիոյ մէջ, ապա այդ երկիրներուն մէջ անոնք հայոց ցաւերը կը բաժնեն: Տակաւին, կան շատ ժողովուրդներ, որոնք Հայկական հարցին մասին չեն լսած, սակայն Լիբանան եւ Սուրիա մեզի նկատմամբ դրական կեցուածք կը ցուցաբերեն, սակայն անոնք նաեւ կը գործեն ըստ իրենց շահերուն: Հոս հարկ է նշել, որ այս երկիրները Թուրքիոյ եւ թրքական իշխանութիւններուն հետ իրենց յարաբերութիւններուն մէջ հաշուի պէտք է առնեն նաեւ լիբանանեան եւ սուրիական ինքնութիւն կրող հայ քաղաքացիները եւս», եզրափակեց Յ. Թաւաքեան:

**ՄՏԱՅԻՆ ԵՒ ՀՈԳԵԿԱՆ ՎԻՃԱԿՆԵՐ
ՈՉ ԹԷ ԸՆԿՃՈՒԱԾ, ԱՅԼ ՊԱՐԶԱՊԷՍ՝ ՏԽՈՒՐ, ԱՌԱՆՁԻՆ ԿԱՄ ՈՉ
ՈՒՐԱԽ**

*ՏԽՐՈՒԹԻՒՆԸ ԱՅՆՔԱՆ ԳԷՐ ԲԱՆ ՄԸՆ Է: ԸՆԿՃՈՒԾՈՒԹԵԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ
ԿԸ ԲԱԶՄԱՆԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՏԱՐԱԾՔԻՆ: ՍԱԿԱՅՆ, ՄԻՆՉ ԱՅՍ ՀԻՄՆԱԴՈՒԹԵԱՆ
ԳԻՏԱԿՅՈՒԹԵԱՆ ՇՆՈՐՀԻՒ ՎԵՐԱՑԱԾ Է ԱՅՆ ԽԱՐԱՆԸ, ՈՐ ԺԱՄԱՆԱԿԻՆ
Կ'ԱՌՆՉՈՒԵՐ ԱՆՈՐ, ԱՆԴԻՆ՝ ԱՐԴԵՕՔ ԿՈՐՍՆՅՈՒՅԱԾ ԵՆՔ ՊԱՐԶԱՊԷՍ ՏԽՈՒՐ
ԶԳԱՆՈՒ ԿԱՐԵՒՐՈՒԹԵԱՆ ԶԳԱՅՈՂՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԵՐ ՏԱՐԲԵՐ ԶԳԱՅՈՒՄՆԵՐԸ
ԱՅԼԱԶԱՆ ԲԱՌԵՐՈՎ ԱՐՏԱՅԱՅՏԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ, ՀԱՐՑ ԿՈՒ ՏԱՅ
ԳՐԱԳԻՏՈՒՄԻ ՄԵՐԻ ՔԵՆՆԻ «ՊԻ. ՊԻ. ՍԻ.»Ի ԿԱՅՔԻՆ ՄԷՋ:*

Երբ կը մտաբերեմ իմ սեփական համեմատաբար հանդարտ մանկությունս
Իրլանտայի մէջ 1950-ական տարիներուն, կը յիշեմ լուռ մըմունքներ անձերու մասին,
որոնք կը տառապէին «ջղային» հարցերէ:

Կը յիշեմ, երբ կը պատմէին դրացիի մը մասին. բարեկեցիկ կին մը, որուն
ընդարձակ բնակարանը եւ վայելուչ արտաքինը տեղւոյն հաւաքականութեան
նախանձի առարկան էր, «ջիղերու քայքայումէ» կը տառապէր:

Թէեւ, երբ այս մասին լսածներս կրկնած էի հօրեղբօրս եւ հօրաքրոջս, որոնց
հետ կը բնակէի, զիս լռեցուցած էին յանդիմանական բառերով, գրաքննութեան պէս:
Յստակ էր, թէ քիչ մը ամօթալի բան մը կար «ջղային խանգարումի» մէջ, եւ այս
մասին խօսիլը ճիշդ չէր:

Այժմ կ'անդրադառնամ, թէեւ այդ ժամանակ չէի անդրադարձած, թէ
ընկճուածութիւնը ընտանիքներու եւ դրացիներու միջեւ գաղտնի պահուած վիճակ
մըն էր: Սակայն ընկճուածութեան կամ որեւէ տեսակի մտային հիւանդութեան
խարանը անպայման որ ծանրացուցած է տառապողներուն վիճակը:

Ինչպէ՛ս փոխուած են ժամանակները: Ներկայիս ընդունուած ճշմարտութիւն է,
թէ ընկճուածութիւնը համաշխարհային տարողութեամբ հիւանդութիւն մըն է:

Յայտնապէս տարբեր բառերու ետին թաքնուած, տեւաբար կրկնուող,
երկարատեւ, միաբեւեռ, երկբեւեռ, բժշկական դարմանումի ենթակայ, հիմնական
կամ երկրորդական ընկճուածութիւնը շատ աւելի ծանր հիւանդութեան բեռ մըն է
աշխարհի ուսին, քան՝ պատերազմը, քաղցկեղը եւ ԷՅՏԾ-ը՝ միասին:

Այս մասին բացայայտօրէն խօսելու նոր մօտեցումը լաւ բան մըն է: Սակայն
արդեօք միաժամանակ այս ընթացքին բան մը չե՞նք կորսնցներ:

Օրինակ՝ նկատի ունեցէք հոգեկան խոցը կամ «թրոմա»ն, որ այժմ յաճախ կը
գործածուի եւ տեւաբար զրոյցներու մէջ անոր մասին ակնարկութիւններ կը
կատարուին: Երբ կը խօսուի մահուան սուգը ապրող անձի մը տառապանքին մասին,
կ'ըսուի, թէ ան «հոգեկան խոց մը» կը դիմագրաւէ:

Մեկը, որ ցնցումի ենթարկուած է, կ'ըսուի, թէ «հոգեպէս խոցուած» է:
Ամուսնական բաժանումը, մարդկային տխուր փորձառութիւն մը, որ կորուստի

զգացողութեամբ մը կը պատէ մեզ եւ կը խանգարէ կապուածութեան մեր պահանջը, նոյնպէս կը նկարագրուի իբրեւ «հոգեկան խոց պատճառող փորձառութիւն» մը:

Փրոֆ. Լուիս Ուոլփըրթ ընկճուածութիւնը ուսումնասիրող իր ինքնակենսագրական բացառիկ գործը հմտօրէն անուանած է «Մալիկներն սետնես», եւ «հոգեկան խոցի» գաղափարը կը գործածէ, օրինակ, սուգը նկարագրելու համար:

Վիշտը յուսահատութիւն պատճառելու աստիճան կը խռովէ: Անիկա անդադար կը հարուածէ: Սիրելիի մը կորուստը զգացական ցաւ կը պատճառէ, եւ այս ցաւը կրնայ «դարեր» տեսել: Սակայն ինչո՞ւ զայն չկոչել իր պատշաճ անունով. սուգ, վիշտ կամ կորուստ:

Պատճառներէն մէկը այն է, թէ սկսած ենք կորսնցնել այն հին ծեսերը, զորս մարդիկ կիրարկած են հազարամեակներ շարունակ:

ՍԳԱՆՈՒ ԴԵՍ

Երբ 1960-ական տարիներուն երիտասարդ կին մըն էի Ֆրանսայի մէջ, կը հանդիպէի փակ փեղկերով վաճառատան մը, որուն վրայ գրութիւն մը կ'ըսէր. «*Ֆերմէ փուր տէօյ*»: Այսինքն՝ փակ՝ սուգի պատճառով:

Նման գրութիւններ տակաւին կը տեսնենք Ֆրանսայի տարածքին եւ նմանօրինակ հակազդեցութիւն մը սովորական է նաեւ Իտալիոյ մէջ: Սուգի խորհրդանշները լայն տարածում գտած են բոլոր մշակոյթներուն մէջ, ինչպէս՝ այրիներու յատուկ սեւ զգեստներ, թելի սեւ կապեր, եւ կ'ակնկալուէր, որ հաւաքականութիւն մը յարգէր սգաւորները: Այժմ սուգի արտաքին երեւոյթները նահանջած են, եթէ ոչ՝ վերցուած աւելի աշխարհիկ հաւաքականութիւններու մէջ: Սակայն տխրութեան եւ կորուստի մեր զգացողութիւնը կը շարունակուի, եւ փոխանակ զայն կոչելու սուգ՝ կը կոչենք «հոգեկան խոց»:

Թերեւս կարելի է վերակենդանացնել կամ վերագտնել աւելի լայն եւ ոչ բժշկագիտական բառապաշար մը՝ նկարագրելու համար մարդկային փորձառութեան այս տարողութիւնը:

Ընկճուածութիւնը նաեւ կրնայ մեղամաղձոտութիւն ըլլալ, վիատութիւն, յուսախաբութիւն, լքուած սգալու վիճակ, տխրութիւն, տառապանք, սուգ, մերժուածութիւն, զղջում, անձկութիւն, վիշտ, համակուածութիւն, ներհայեցողութիւն, կորուստ, բաժանում, առանձնութիւն, մեկուսացում, օտարում, յանցանքի զգացում, յուսահատութիւն, տրամադրութեան ծանր խանգարում, եւ սոսկ ուրախութեան պակաս:

Ընկճուածութիւնը կրնայ կոչուիլ տրամադրութեան պակասի որեւէ տեսակ, սակայն այս բացատրութիւնը չենք գործածեր այսօր: Էտոլոըրտեան ժամանակներուն անգլիացիք մեծապէս հետաքրքրուած էին վիճակով մը, զոր կը կոչէին «նիւրասթենա» (ջիդերու խանգարում): Վըրճինիա Վուլֆ ախտաճանաչուած էր այս վիճակով:

Անիկա նաեւ ծանօթ էր իբրեւ «ջիդերու տկարութիւն» կամ աւելի մեղմ բառերով՝ գերզգայնութիւն եւ «կաշիի բարակութիւն»:

Հովանաւորութեամբ
Գերաշնորհ Տէր **Կորիւն Արք. Պապեանի**
Քուէյթի եւ Արաբական Ծոցի Երկիրներու Կաթողիկոսական Փոխանորդ

Նախագահութեամբ
Տէր եւ Տիկ. **Մելիք Մելիքսեւեանի**
Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ասպետ

ԵՐԳԱՅԱՆԴԵՍ

Միացէ՛ք մեզի՝ Թալինին երգահանդէսին,
Եկէ՛ք զուարճանանք, ուրախանանք եւ լուսանկարուինք
Միասին երգենք, խաղանք ու պարենք:

Ուրբաթ, 22 Հոկտեմբեր, 2010-ին
Երեկոյեան ժամը 6:00-ին مسرح المدارس الخاصة սրահին մէջ:

Տոմսերուն սակերն են՝
8 Բ.Տ. մեծերուն
5 Բ.Տ. փոքրերուն
2 Բ.Տ. երեք տարեկանէն վար

Տոմսերը ստանալու համար կրնաք դիմել
Վարժարանիս քարտուղարութեան կամ կապուիլ
հետեւեալ հեռախօսահամարներուն.-

66656669 Պրն. Աւետիս Իյճեան
97269890 Պրն. Սիմոն Օգճեան

